

## ԿԱՐԾԻՔ

«Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Սարգիս Բալդարյանի ներկայացրած

### **ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՃԱՌՎԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԸ ՆՈՐ ՋՈՒՂԱՅԻ ԱՌԵՎՏՐՎԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ**

վերտառությամբ ատենախոսության  
մասին

Վաճառականական ձեռնարկների հեղինակ Կոստանդ Ջուղայեցին 17-րդ դարի հայ մատենագրության նշանավոր դեմքերից է, ում անխոնջ ջանքերի շնորհիվ հիմք է դրվել հայկական վաճառականական գրականության ժանրին: Այս ուղղության առաջացումն անշուշտ պայմանավորված էր համաշխարհային առևտրում ազդեցության ոլորտներ նվաճած ջուղայեցի վաճառականության շրջանակներում առևտրական տեղեկատվության համապարփակ ձեռնարկ-դասագրքեր ունենալու հարաճուն պահանջարկով:

Նկատի ունենալով Կոստանդ Ջուղայեցու հարուստ մատենագրության անտեսված ու ստվերում մնացած լինելու հանգամանքը, <<**Հայկական վաճառականական ձեռնարկները Նոր Ջուղայի առեվտրական ցանցում**>> ատենախոսության հեղինակ Սարգիս Բալդարյանն իր առջև խնդիր է դրել բազմակողմանի ու ընդգրկուն ուսումնասիրության ենթարկել գիտական շրջանառությունից դուրս մնացած ձեռնարկները, որոնցում նշանակալի արժեք է ներկայացնում առևտրական դպրապետի ուղին ընտրած ու վաճառականական ձեռնարկների հեղինակի մատենագիտական ժառանգությունը, որի մասին ցայսօր մեզ հայտնի տեղեկությունների շրջանակը սահմանափակվում էր հատուկ նստ վկայություններով:

Բացի այդ, առևտրական ձեռնարկները դիտարկվել են գերազանցապես իբրև տնտեսական պատմության աղբյուրներ, ինչի հետևանքով, ըստ ուսումնասիրողներից մեկի ձևակերպման, դրանց «արտատնտեսական» բովանդակությունը մնացել է ստվերում: Նույնը վերաբերում է նաև Կոստանդ Ջուղայեցու երկերին, որոնց հետազոտությունը պահանջում է համալիր մոտեցում ու պատշաճ ուշադրություն այդ տնտեսական աշխատությունների ոչ տնտեսական հատվածների նկատմամբ:

Հետազոտողը, Մատենադարանի «Տնտեսական պատմության վավերագրեր» շարքը հարստացնելու նպատակով, գործի ղնելով իր աղբյուրագիտական

հմտությունները, ի հավելումն ներկայացված հետազոտության, նաև պարտավորվել է կազմել Կոստանտ Ջուղայեցու առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի ծանոթագրությունները, ինչը տևական ջանքեր պահանջող ողջունելի և կարևոր աշխատանք է:

Վստահաբար կարելի է ասել, որ հայ վաճառականության գործունեության առնչվող փաստաթղթային ծավալուն հավաքածուների նկատմամբ Սարգիս Բալդարյանի ցուցաբերած ուշադրությունը, ըստ ամենայնի, պայմանավորված է այն իրողությամբ, որ Նոր Ջուղայի հայկական առևտրական համայնքն իր ժամանակին ողջ Ասիայում միակը համարվելու հավակնություն է ունեցել, որից էլ մեզ է ավանդվել առևտրական բնույթի աղբյուրագիտական հարուստ ժառանգություն: Հեղինակն իր շարադրանքով համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հայկական վաճառականական ձեռնարկների՝ որպես նույն ժամանակներում շարադրված համաշխարհային առևտրական երկերի հայկական օրինակների հետազոտություն, համահունչ է պատմագիտության արդի միտումներին:

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, Օքսֆորդի Բողլեյան գրադարանում և Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքում պահվող Կոստանտ Ջուղայեցու հայկական վաճառականական ձեռնարկների ձեռագրական ավանդույթի մասին ամբողջական պատկերացումը դրանց գիտական բնագրերի պատրաստման ու հրատարակության ճանապարհին ատենախոսության հեղինակ Սարգիս Բալդարյանի կատարած առաջին ու հաստատուն քայլը կարելի է համարել:

Ծանոթանալով ատենախոսության շարադրանքին, ինչպես նաև օգտագործած գրականությանն ու արխիվային նյութերին, համոզվում ես, որ հեղինակն իր հետազոտությունների առարկան ի մի բերելու և դասակարգելու հարցում ջանք չի խնայել:

Այնուամենայնիվ, Կատարած ծավալուն հետազոտությունների ընթացքում հեղինակի ուշադրությունից վրիպել են ատենախոսության որակի վրա անգամ դույզն ազդեցություն չթողած, սակայն հետագա աշխատանքների ժամանակ ճշգրտման ենթակա մի շարք հարցեր, որոնցից կառանձնացնեինք հետևյալը.

1. Առաջարկվում է, նյութի հանրամատչելիությունն ապահովելու նպատակով, որպես հավելված ցանկաբար ներկայացնել Կոստանտ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկներում օգտագործված օտար բառերն ու եզրույթները, ինչպես նաև դրանց իմաստային նրբերանգները: Այդ կարգի բառերի և եզրույթների շարքին կարելի է դասել հիմնականում պարսկերեն և պարսկերենի միջոցով փոխառված արաբերեն ու թուրքերեն այնպիսի բառեր, որոնք հաճախ հնչյունափոխության հետևանքով անճանաճչելի են դարձել: Այդպիսին է , օրինակ՝ «էնալմալ» եզրույթը (արաբերեն՝ عين المال) (նյութական

արժեք, որի մասին կարելի է պատկերացում կազմել զգայարանների միջոցով. անշարժ գույքը, գրաստը, հագուստը և այլն):

2. Ատենախոսության մեջ օգտագործված է «Նոր Ջուղայի բարբառ» ձևակերպումը /Էջ 24, 28, 31/: Առաջարկվում է տվյալ դեպքում կիրառել «խոսվածք» եզրույթը, քանի որ Ջուղայի բարբառի հիմնական կառուցվածքի մեջ է մտնում Նոր Ջուղայի խոսվածքը: Ջուղայի բարբառի՝ Նոր Ջուղայի խոսվածքի հիմքում ընկած լինելու փաստի մասին են վկայում հայերեն բարբառների ու խոսվածքների դասակարգման աշխատանքներն իրականացրած մեր լեզվաբանները:

3. Կարևոր է անդրադառնալ Նոր Ջուղայի հայ վաճառականների միջավայրի ձևավորման պատմությանը և Շահաբբաս Առաջինի՝ հայ առևտականներին շնորհած արտոնություններին, ինչպես նաև Սեֆյան Իրանի միջազգային առևտրին զարկ տալու պարսից իշխանությունների քաղաքականությանը: Այս թեման թեև ուսումնասիրության պակաս չի զգում, սակայն դրա համառոտ շարադրանքը կարող է կշիռ հաղորդել տվյալ ատենախոսությանը:

4. Նոր Ջուղայի հայ վաճառականների գործունեության մասին շրջնառվում է պարսկերենով հարուստ գրականություն, որը սակայն վրիպել է ատենախոսի ուշադրությունից: Պարսկերենով այդ կարգի բազմաթիվ ուսումնասիրությունների թվին են պատկանում **Շոքուհսադաթ Ռաբիհաշեմիի** հեղինակած ծավալուն հեղվածը **«Սեֆեվիների շրջանում Նոր Ջուղայի հայ առևտրականների հաջողությունների պատճառները»** խորագրով, **Բադեր Խազալիի**՝ **«Հայերը Շահաբբաս Առաջինի ժամանակաշրջանում»** վերտառությամբ աշխատությունը, **«Վատիկանի ներկայացուցիչների ու Սպահանի հայության միջև հարաբերությունները»** մենագրությունը և բազմաթիվ այլ աշխատություններ:

5. Կարևոր ենք համարում վերծանել /հավելվածի տեսքով/ «Աշխարհաժողով»-ի՝ Նոր Ջուղայում պահվող ընդօրինակության հիման վրա ատենախոսության 68-րդ էջում ներկայացված 72 տեղանունները, որոնք հաճախ տարընթերցման առիթ են տալիս:

6. Կարելի է անդրադառնալ կաթոլիկ քարոզիչների հիմնադրած դպրոցների ու առաքելական համայնքի կրթօջախների միջև գոյություն ունեցող հակամարտությանը, որի մասին Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի «Կաթողիկոսական դիվանում» գրանցված պարսկերեն վավերագրերը կարող են

լույս սփռել կաթուղիկություն ընդունած Շահրիմանյանների դպրոցի կարճատև գոյության և ոչ մրցունակ լինելու փաստի վրա:

Վերը նշված դիտարկումներով հանդերձ, սույն ատենախոսությունը թեմայի ընտրության առումով եզակի է, որը կարող է աղբյուրագիտական հիմք ծառայել տվյալ ոլորտի հետ առնչվող բազմաթիվ այլ հարցերի հետագա ուսումնասիրման համար: Ատենախոսության մեջ քննարկվող հիմնախնդիրները արժևորվում են նաև իրենց գործնական նշանակությամբ: Աշխատանքի գիտական նորույթները, որոնք հիմնավոր ձևով ներկայացված են ատենախոսության մեջ, հաստատում են առաջադրված խնդիրների ուսումնասիրման հիմնավորվածությունը:

Չեղինակի եզրակացությունները տրամաբանված են ու համոզիչ: Քննարկվող թեմայի վերաբերյալ հեղինակն ունի բազմաթիվ հրատարակված գործեր:

Սարգիս Բալդարյանի թեկնածուական ատենախոսությունը ընդգրկուն և համապարփակ գիտական ուսումնասիրություն է, որը համապատասխանում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին և արժանի է պատմական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանին:

Գրիգոր Առաքելյան  
Պատմագիտության թեկնածու  
9,07,2020